Արծուի Բախչինեան, *Հայերը Չինաստանում: Հայ-Չինական Պատմամշակութային Առնչութիւնները*: Ամփոփումը՝ չինարէն: Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2017, 356 էջ:

Հայ համայնքների պատմութեան ուսումնասիրութիւնը պատմագիտութեան առանցքային ու կարեւոր ուղղութիւններից է, որը հայագիտութեան մէջ լուրջ հիմքերի վրայ դրուեց դեռեւս նախորդ դարում, իսկ ՀՀ անկախութեան վերականգնումից յետոյ լայն ուշադրութեան է արժանացել, տարբեր գիտահետազօտական հաստատութիւնների մասնագէտների կողմից հրապարակուել են Սփիւռքի աւանդական ու նոր համայնքների պատմութեանը վերաբերեալ տասնեակ աշխատութիւններ: Այս ենթահողում զգալի աշխատանքներ են տարւում ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հայ Գաղթօճախների եւ Սփիւռքի Պատմութեան բաժնում, որի աշխատակից, բանասիրական գիտութիւնների թեկնածու Արծուի Բախչինեանի կողմից գիտական ու լայն հասարակայնութեանը ներկայացուեց երկարամեայ պրպտումների արդիւնք հանդիսացող *Հայերը Չինաստանում. Հայ-Չինական Պատմամշակութային Առնչութիւնները* աշխատութիւնը: Աշխատանքը շարադրուել է մեծաքանակ, զգալի չափով դեռեւս սակաւ ուսումնասիրուած, գիտական հանրութեանը քիչ ծանօթ արխիւային, մամուլի, մասնագիտական ու հրապարակախօսական գրականութեան, ինչպէս նաեւ համացանցի նիւթերի վերլուծութեան հիման վրայ:

Բախչինեանի կատարած պատմաբանասիրական բնոյթ կրող այս աշխատանքը գալիս է լրացնելու մեր իմացութիւնը ոչ միայն Չինաստանի, այլ նաեւ Հարաւ-Արեւելեան Ասիայի ոչ-այնքան բազմամարդ, սակայն նախորդ դարերում նշանակալի դեր ունեցած հայ գաղութների պատմութեան բազում կողմերի վերաբերեալ: Հեղինակն, առկայ տուեալների զուգորդման ու մշակման շնորհիւ, կարողացել է բացայայտել յիշեալ հայ համայնքների պատմական ու մշակութային հարուստ շերտերը, ստանալ Չինաստանում հայ ժողովրդի ներկայութեան համեմատաբար ամբողջական պատկերը: Այդպիսի աշխատանքներ ժամանակին ձեռնարկել են հայ գաղթօճախների պատմութեան որոշ հետազօտողներ (Աշոտ Աբրահամեան, Հրաչեայ Աճառեան, Ռաֆիկ Աբրահամեան, Ռուբէն Գինին եւ այլք), սակայն ներկայ անդրադարձը համընդգրկուն եւ առաւել ամբողջական է:

Աշխատութիւնն աչքի է ընկնում մատուցուող նիւթի յագեցուածութեամբ, առատ յղումներով, օգտագործուած են բազմաթիւ եւ բազմալեզու աղբիւրներ: Այն ընդգրկում է ոչ միայն Չինաստանի հայութեան պատմութիւնը, այլեւ հայ-չինական առնչութիւնները՝ դրանց սկզբնաւորումից մինչեւ մեր օրերը: Աշխատութիւնը բաղկացած

է նախաբանից, 10 գլուխներից, յաւելուածից, վերջաբանից, օգտագործուած սկզբնաղբիւրների եւ գրականութեան ցանկից:

Նախաբանում ներկայացուած են աշխատութեան սկզնաղբիւրներն ու գրականութիւնը, վերլուծուել են մինչ հեղինակի ներկայ աշխատանքը թեմայի առնչութեամբ ՀՀում, Սփիւռքում ու արտերկրում հայ եւ օտար հեղինակների հետազօտութիւններ, գիտական յօդուածներ ու հրապարակումներ, դրանցում կատարուած հիմնական շեշտադրումներ:

Առաջին գլխում ներկայացուել է «Հայ-Չինական Կապերը Մետաքսի Ճանապարհին», որտեղ հեղինակը բացայայտել է շուրջ երկու հազար տարի առաջ միջազգային առեւտրում Հայաստանի եւ հայ վաճառականութեան ունեցած դերը: Վաղ շրջանի հայ-չինական տնտեսական կապերի վկայութիւն են Գառնիից, Արտաշատից, Դուինից եւ այլ վայրերից պեղումների արդիւնքում գտնուած չինական ծագման ապրանքները (յախճապակի, տարատեսակ սպասքի առարկաներ՝ թաս, գաւաթ, անօթ եւն.), ինչպէս նաեւ Չինաստանում յայտնաբերուած յախճապակէ արձանիկների եւ այլ իրերի վրայ հայկական, քրիստոնէական հնարաւոր մոտիւները:

Աշխատանքի երկրորդ եւ երրորդ գլուխները նուիրուած են միջնադարում ձեւաւորուած գրական եւ մշակութային կապերին, հայերին Չինաստանում, հայ եւ օտար հեղինակներից միջնորդաւորուած յիշատակութիւններին: Հեղինակը ներկայացրել է չինական արուեստի ազդեցութիւնը, յաճախ նմանակումը կամ մոտիւները, որոնք առկայ են Հայաստանում եւ տարածաշրջանում մանրանկարչութեան, գորգագործութեան եւ այլ ասպարէզներում: Առանձին անդրադարձ է կատարուած Չինաստանում, Մոնղոլիայում, Միջին Ասիայի եւ հարեւան տարածաշրջաններում հայերի յայտնուելու, նրանց կրօնական ու առեւտրատնտեսական գործունէութեան վերաբերեալ: Հայ պատմիչների ու ժամանակագիրների, օտար հեղինակների, ճանապարհորդների յիշատակութիւնների արդիւնքում հնարաւոր է դարձել պատկերել հայերի՝ դէպի Չինաստան ու Արեւելքի երկրներ (Ինդոնեզիա, Ֆիլիպիններ, Սինգապուր, Հնդկաստան, Թայուան եւն.) յայտնուելու, բնակուելու ու գործունէութիւն ծաւալելու գործընթացը, միջազգային եւ միջնորդ առեւտրում ունեցած վստահութիւնն ու յարգանքը:

Աշխատութեան հինգերորդ գլուխը վերնագրուած է «Հայ Եկեղեցին Չինաստանում», որտեղ հեղինակն ամենայն մանրամասնութեամբ ներկայացնում է ոչ միայն Չինաստանում (Հարբին), այլ նաեւ ռուսական Սիբիրում եւ Հեռաւոր Արեւելքում Ի. դարասկզբին ցաքուցրիւ ապրող հայութեան հոգեւոր պահանջմունքների հարցը, առաջին աղօթատների բացումը եւ պատարագների մատուցումը: Յատկանշական է, որ Աստրախանի թեմական առաջնորդարանի ջանքերով Սիբիրում եւ

Ծայրագոյն Արեւելքում նշանակուել է հոգեւոր հովիւ, որը յետագայում իր նստավայրը Վլադիվոստոկից տեղափոխել է Հարբին՝ դառնալով չինահայութեան հոգեւոր առաջնորդը: Հարբինի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին բացուել է 1923 Նոյեմբերին՝ դառնալով տարածաշրջանի հայութեան հոգեւոր-մշակութային կենտրոնը: Չինաստանի տարբեր քաղաքներ (Տէանձին, Շանհայ, Հայլար եւն.) հայ հոգեւորականութեան այցերի շնորհիւ տեղի հայութիւնը նոյնպէս մասնակից է դարձել հոգեւոր կեանքին, կատարուել են մկրտութեան եւ պսակադրութեան կարգեր: Այդուհանդերձ, տեղի հոգեւոր կեանքը մերթընդմերթ ընդհատուել է կամ տուժել հոգեւորական չունենալու, ներքին հակասութիւնների, քաղաքական անկայունութեան եւ այլ պատճառներով:

Աշխատութեան վեցերորդ գլուխը վերնագրուած է «Չինահայութիւնը 1920-1950 թթ.», որտեղ հեղինակն անդրադարձ է կատարում համայնքի պատմութեան առանցքային փուլերից մէկին: Համադրելով ժամանակակից հայ հեղինակների բազմաթիւ յուշագրութիւնները, հայ եւ ռուսալեզու մամուլում տպագրուած հարուստ ու հետաքրքրաշարժ նիւթերն ու թղթակցութիւնները, տարաբնոյթ ուսումնասիրութիւնները՝ Բախչինեանը ներկայացրել է դէպի Չինաստան հայութեան նոր խմբերի արտագաղթը (մասնաւորապէս՝ Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատման տարիներին), չինահայերի ընկերահասարակական իրականութիւնը, կազմը, վիճակագրական տուեալներ թուաքանակի ու տեղաբաշխման վերաբերեալ: Այս շրջանում հայերը հասել են զգալի յաջողութիւնների տնտեսական եւ հասարակական ասպարէզներում, հիմնել են տարատեսակ միութիւններ, 1926ին համայնքային վարչութեան հովանու ներքոյ բացել են առաջին հայկական դպրոցը, հրատարակել *Երկիր, Վեստնիկ Արմենիի* պարբերականները եւն.: ՀՅԴ անդամները Հարբինում ունեցել են մասնաճիւղ, հասարակական, գրական, թատերական ու մարզական հաստատութիւններ, սակայն խորհրդա-չինական յարաբերութիւնների ամրապնդումը յանգեցրել է այստեղ ապաստանած ՀՅԴ անդամների հետապնդումների եւ ձերբակալութիւնների: Չինահայերը պարբերաբար անցկացրել են ընդհանուր ժողովներ, նշել ազգային եւ պետական տօները, նշանաւոր գործիչների նուիրուած միջոցառումներ, կազմակերպել են թատերական ներկայացումներ:

1930ականների վերջին, Երկրորդ Աշխարհամարտի տարիներին ինչպէս Չինաստանի, այնպէս էլ ամբողջ Հարաւարեւելեան Ասիայի (Ինդոնեզիա, Սինգապուր եւն.) հայութիւնը զգալիօրէն տուժել է ճապոնական ռազմաքաղաքական յարձակման հետեւանքով, սպանուել եւ արգելափակուել են համակենտրոնացման ճամբարներում: Յատկանշական է, որ ճապոնական ռազմական ճամբարներից ազատուելուց յետոյ, մեծ զրկանքների հանդիպած հայութիւնն այժմ էլ սկսել է հե-

տապնդուել չինացի համայնավարների կողմից: Այսպէս սկիզբ է առել հայութեան զանգուածային հեռացումը Չինաստանից: Եղել են նաեւ Հայաստան հայրենադարձուած ընտանիքներ, իսկ մնացեալները յայտնուել են տնտեսական անբարենպաստ իրականութեան մէջ:

Եօթերորդ գլխում հեղինակն ամենայն մանրամասնութեամբ ներկայացրել է չինահայ գործիչներին, ովքեր տարատեսակ գործունէութիւն են ծաւալել ազգային, տնտեսական, մշակութային, հասարակական, դիւանագիտական կամ մասնագիտական ասպարէզներում: Հեղինակը տքնաջան պրպտել ու վեր է հանել իւրաքանչիւր գործչի կենսագրութեան տարբեր կողմերը, ինչը կարեւոր նշանակութիւն ունի նիւթի ամբողջականութեան համար:

Առանձին գլուխներով (Ը.-Թ.) հեղինակն անդրադարձել է հայ-չինական մշակութային, միջպետական ու գիտակրթական կապերին, որոնք տեղ են գտել ԺԹ.-ԻԱ. դարերում: Աշխատութեան այս բաժիններում հեղինակը ներկայացրել է հայ-չինական մշակութային առնչութիւնները, դրանց տարբեր բաղադրիչներով: Հայ-չինական մշակութային կապերը դրսեւորուել են երկու ժողովուրդների մշակոյթի վերաբերեալ տարբեր յօդուածներով, բանաստեղծութիւններով, թարգմանութիւններով, թատերական, երաժշտութեան եւ պարի, գեղարուեստի ու այլ ոլորտներում բեմադրութիւններով, ցուցահանդէսներով: Հեղինակն իրաւացիօրէն նշում է, որ չինարէնից թարգմանութիւնների հիմնական մասը կատարուել է միջնորդ լեզուների միջոցով, իսկ արդի կապերը կարող են շտկել այդ իրավիճակը: Այս ուղղութեամբ մեծ ձեռքբերում է հայ-չինական մշակութային համագործակցութեան պայմանագիրն ու ծրագրերը, որոնք կեանքի են կոչուել վերջին տարիներին:

Հայ-չինական միջպետական ու գիտակրթական կապերը աւելի սերտացան յետխորհրդային վերջին քառորդ դարում. պետական պատուիրակութիւնների յաճախակի փոխայցերը նպաստել են երկկողմ կապերի հաստատմանը՝ սկսած գիտակրթականից եւ աւարտած տնտեսական ու ռազմաքաղաքական առնչութիւններով: Միջպետական պայմանագրերը ընդգրկում են ամենատարբեր ոլորտներ, երկու երկրների բուհերում սովորում են հայ եւ չինացի ուսանողներ, ուսումնական հաստատութիւններին կից ստեղծուել են գիտական կենտրոններ (ինչպէս, Երեւանի Բրիւսովի անուան Լեզուաբանական Համալսարանում եւ Դալիանի Օտար Լեզուների Համալսարանում), հրատարակւում են տեղեկատուական ու վերլուծական ժողովածուներ:

Աշխատութեան վերջին՝ տասներորդ գլխում, որը վերնագրուած է «Հայերն Արդի Չինաստանում», հեղինակը անդրադարձ է կատարել չինահայութեանը վերաբերող հարցերին ժամանակակից փուլում՝

իրաւամբ ընդգծելով, որ հայերի թիւն սկսել է աճել 2000ականներին հիաշիւ ոչ միայն ՀՀից, այլ նաեւ աշխարհասփիւռ կենտրոններից տեղի ունեցող ներգաղթի, որոնք ընդգրկուած են հանրային կեանքի տարբեր ոլորտներում: Չինահայերը հիմնականում կենտրոնացած են Պեկին, Հոնկոնգ, Շանհայ, Գուանժոու քաղաքներում: Չինաբնակ հայերից ոմանք ներգրաւուել են չինական կեանքում (օրինակ, չինական մի շարք հեռուստատեսային շարժանկարների մասնակցած դերասանուհի Լիանա Եդիգարեանը, պարուսոյց եւ պարադիր Վանուշ Բաբայեանը եւ այլք):

Վերջին տարիներին չինահայերի կեանքում նկատելի դեր են ստանձնել Շանհայի Հայկական Ակումբը, Հոնկոնգի Հայկական Կենտրոնը, Հայկական Ուսանողական Միութիւնը, Չինահայ կայքէջը, հրատարակուող երկլեզու տեղեկագիրը եւ այլ կառոյցներ:

«Յաւելուած» եւ «Պատկերազարդումներ» բաժիններում հեղինակը զետեղել է հետաքրքիր նիւթեր, փաստաթղթեր ու նկարներ, որոնք անհարժեշտաբար հարստացրել են ներկայացուող ուսումնասիրութիւնը: Յաւելուածի տուեալները ներկայացնում են նաեւ Չինաստանի հարեւան երկրների՝ Մոնղոլիայի, Վիետնամի եւ Կորէայի հետ հայերի ունեցած պատմամշակութային առնչութիւնները: Հեղինակն աշխատութեան վերջում զետեղել է ամփոփում չինարէնով, որը կարող է շատ օգտակար լինել չինացի ընթերցողի համար:

Աշխատանքը շարադրելիս հեղինակն օգտուել է թեմային վերաբերող հարուստ աղբիւրագիտական ֆոնդից, գրականութիւնից, գիտական հանդէսներից, մամուլից եւ համացանցային նիւթերից, երբեմն մինչեւ անգամ յղել նաեւ գեղարուեստական գործեր (հայ եւ օտար հեղինակների): Մասնաւորապէս գրականութիւնն աչքի է ընկնում իր բազմազանութեամբ, ցանկում ներառուած են բազմաթիւ օտարալեզու ուսումնասիրութիւններ, ինչն իր հերթին անվիճելիօրէն բարձրացնում է ներկայացուող աշխատութեան գիտական արժէքը:

Աշխատութիւնն արդիական է ու հետաքրքիր ոչ միայն հայերիս համար, այլեւ չինացիների համար, քանի որ ընդհանրապէս ներկայացնում է հայ-չինական յարաբերութիւնների ամբողջական պատկերը: Ուստիեւ գտնում ենք, որ այն զգալի ներդրում է հայ-չինական յարաբերութիւնների պատմութեան ներկայացման, հայ համայնքի պատմութեան վերհանման, ինչպէս նաեւ յետագայ ուսումնասիրութիւնների համար, եւ խիստ անհրաժեշտ է նրա թարգմանութիւնը չինարէն եւ անգլերէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
alhovhannes@gmail.com